# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

«18» հոկտեմբերի 2019 թվականի N:528-Ա ք.Գյումրի

## ՆԱԴՅԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «թ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հունվարի 30-ի N:23-Ն որոշման հավելվածի 71-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2019 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 3 որոշումը, եզրակացությունը և Նադյա Բաղդասարյանի 2019 թվականի հոկտեմբերի 17-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2019 թվականի հոկտեմբերի 21-ից դադարեցնել Նադյա Բաղդասարյանի՝ «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատարի լիազորությունները:
2. Նադյա Բաղդասարյանին 2019 թվականի հոկտեմբերի 21-ից նշանակել «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետով:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է